Հավելված 6
«ՀՀՄԴ-ՇՀԱՇՁԲ-15/3-1» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գ>>նում կատարելու ընթացակարգի
հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀՄԴ-ՇՀԱՇՁԲ-15/3-1»

ք. Երևան <<06>> 03. 2017 թ.

ՀՀ սահմանադրական դատարանը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Հակոբյանի, որը գործում է ՀՀ սահմանադրական դատարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Հայկարլի>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Է.Հովսեփյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՏՊԱԳՐԱԿԱՆ աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին և N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտել էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին և գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրամի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալուց հետո 2 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 1707600.(մեկ միլիոն յոթ հարյուր յոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը: կլուծվի:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ այն երկկողմ հաստատելու պահից՝ 15 բանկային

օրվա ընթացքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ժամանակահատվածում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն

---

[1] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում[2]:

7.5 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[3]:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

---

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

7.7 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.9 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.10 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.11 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ սահմանադրական դատարան Երևան, Բաղրամյան 10 ՀՎՀՀ 00018357 ՀՀ ՖՆ գործառնական վարչ ՀՀ 9000111791083	<< Հայկարլի>>ՍՊԸ Ք.Երևան Կիևյան 18/6 ՀՎՀՀ 00253353 <<ՎՏԲ-Հայաստանբանկ>> ՓԲԸ ՀՀ 16072018658600
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
N ՀՀՄԴ-ԵՀԱՇՁԲ-15/3-1 պայմանագրի

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Տեխնիկական բնութագրեր
1	«ՀՀ սահմանադրական դատարան» տեղեկագիր 2017թ N 1-N 4	Հատ	ՏՊԱԳՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ ա/ էջերի տպագրությունը գույնով - Օֆսեթային, 1 բ/ կազմի տպագրությունը գույնով - Օֆսեթային, 4 ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓԵՐԸ - 70X100 1/16 ԷՋԵՐԻ ԹՂԹԻ ՏԵՍԱԿԸ - Օֆսեթային, 80գ/քառ.մ ԿԱԶՄԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿԸ - ջերմասոսնձում, թելակար ԿԱԶՄԻ ԹՂԹԻ ՏԵՍԱԿԸ - Փափուկ, Օֆսեթային,300գ/քառ.մ,դեկորատիվ դաջվածքով ԷՋԵՐԻ ԹԻՎԸ /մեկ համարի/ -250 ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ –եռամյակային 1.2.3.4/յուրաքանչյուրն 400օրինակ/ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ Համակարգչային էջադրումը, սրբագրումը, ձևավորումը, լուսանկարների տեղադրումը/սև-սպիտակ/ և աշխատանքային կապի ապահովումը պատվիրատուի հետ իրականացվում է մատակարարի կողմից: Տպագրվող նյութերն կարող են լինել հայերեն,ռուսերեն և անգլերեն լեզուներով: Կազմի էսքիզը՝

			
2	/Հաղորդում 2017թ ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ / ժողովածու	Հատ	ՏՊԱԳՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ ա/ էջերի տպագրությունը գույնով - Օֆսեթային, 1 բ/ կազմի տպագրությունը գույնով - Օֆսեթային, 4 ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓԵՐԸ - 70X100 1/16 ԷՋԵՐԻ ԹՂԹԻ ՏԵՍԱԿԸ - Օֆսեթային, 80գ/քառ.մ ԿԱԶՄԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿԸ - ջերմասոսնձում, թելակար ԿԱԶՄԻ ԹՂԹԻ ՏԵՍԱԿԸ - Կավճապատ, լամինացված,300գ/քառ.մ ԷՋԵՐԻ ԹԻՎԸ /մեկ համարի/ - 500 Քանակը -400 ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ Համակարգչային էջադրումը, սրբագրումը, ձևավորումը, և աշխա անքային կապի ապահովումը պատվիրատուի հետ իրականացվում է մատակարարի կողմից: Կազմի էսքիզը՝ երես

			 շրջերես

*Տպագրական աշխատանքները Կատարողը իրականացնում է Պատվիրատուի կողմից նախապես տրամադրված նմուշի համաձայն:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ սահմանադրական դատարան
Երևան, Բաղրամյան 10
ՀՎՀՀ 00018357
ՀՀ ՖՆ գործառնական վարչ
ՀՀ 9000111791083

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<< Հայկարլի>>ՄՊԸ
Ք.Երևան Կինյան 18/6
ՀՎՀՀ 00253353
<<ՎՏԲ-Հայաստանբանկ>> ՓԲԸ
ՀՀ 16072018658600

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
N ՀՀՄԴ-ՇՀԱՇՁԲ-15/3-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ եռամսյակների՝ ընդ որում				
		I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	Ընդամենը Տարի
1	«ՀՀ սահմանադրական դատարան» տեղեկագիր 2017թ N 1- N 4	288800	577600	866400	1155200	1155200
2	/Հաղորդում 2017թ ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ / ժողովածու				552400	552400

ԳՆՈՐԴ

ՀՀ սահմանադրական դատարան
հասցե-Բաղրամյան 10
ՀՎՀՀ-00018357
բանկ-ՀՀ ՖՆ գործառնական հաշիվ
հ/հ- 900011179083

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<< Հայկաբլի>>ՍՊԸ
Ք.Երևան Կիևյան 18/6
ՀՎՀՀ 00253353
<<ՎՏԲ-Հայաստանբանկ>> ՓԲԸ
ՀՀ 16072018658600

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
N ՀՀՄԴ-ՇՀԱՇՁԲ-15/3-1 պայմանագրի

ՎԱՌԵԼԻՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2017թ.								Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	**«ՀՀ սահմանադրական դատարան»** տեղեկագիր 2017թ N 1- N 4	հատ	722	400	288800	400	288800	400	288800	400	288800	1600	**1155200**
2	/Հաղորդում 2017թ ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ / ժողովածու	հատ	1381	-	-	-	-	-	-	400	552400	400	**552400**
Ընդամենը				X		X		X		X		X	1707600

ԳՆՈՐ

ՀՀ սահմանադրական դատարան
Երևան, Բաղրամյան 10
ՀՎՀՀ 00018357
ՀՀ ՖՆ գործառնական վարչ
ՀՀ 900011179083

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<< Հայկարլի>>ՄՊԸ
Ք.Երևան Կիևյան 18/6
ՀՎՀՀ 00253353
<<ՎՏԲ-Հայաստանբանկ>> ՓԲԸ
ՀՀ 16072018658600

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
<< 06 >> 03. 2017թ. կնքված
կնքված N ՍԴ-ՇՀԱՇՁԲ-15/3-1 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ

<< Հայկարլի>>ՍՊԸ
Ք.Երևան Կինյան 18/6
ՀՎՀՀ 00253353
<<ՎՏԲ-Հայաստանբանկ>> ՓԲԸ
ՀՀ 16072018658600

Պատվիրատու
ՀՀ սահմանադրական դատարան
Երևան, Բաղրամյան 10
ՀՎՀՀ 00018357
ՀՀ ՖՆ գործառնական վարչ
ՀՀ 9000111791083

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N129
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« 06 » « 03 » 2017թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը **ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ** ***Տպագրական աշխատանքներ*** *Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «06» «03» 20 17թ.* Պայմանագրի համարը՝ ՍԴ-ՇՀԱՊՁԲ-15/20-1 Պատվիրատուն՝ ի դեմս ՀՀ սահմանադրական դատարան և Պայմանագրի կողմը՝ ի դեմս <<Հայկարլի >>ՍՊԸ-ի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «06» «03» 2017 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N 1 եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարմա ժամկետ /ըստ վճարմա ժամանա ցույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	***Տպագրական աշխատանքներ***	ՍԴ տեղեկագիր և հաղորդում			հունվար-դեկտեմբեր	հունվար-դեկտեմբեր	1707600	հունվա դեկտեմբ

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
<< 06>> 03. 2017թ. կնքված
կնքված N ՍԴ-ՇՀԱՇՁԲ-15/3-1 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N3

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ ՍԴ ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
/Հայկարլի/ ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2017 թ.03. 06 -ին կնքված N ՍԴ-ՇՀԱՇՁԲ-15/3-1
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը ՍԴ -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունը.

Ծառայություն		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**
Տպագրական աշխատանքներ	1	դրամ

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն